ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնումների գնահատող հանձնաժողովի
2021 թվականի հունիսի 23-ի N09-8/23.06.21 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման դրույթների կիրառմամբ

Գնանշման հարցման ծածկագիրը՝ **ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/8-Ք-09/23.06.21-ԱՄ**

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **30 կգ 1-13 տեսակի քսանյութի** մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Մատակարարման ժամկետ է սահմանվում **մեկ ամիս՝ պայմանագիրը կնքելու օրվանից:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԷԿ»ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային-1 հասցեով կամ Էլ. փոստ info@raztes.am:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԷԿ» ԲԲԸ ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, 2021թ. հուլիսի 08-ին ժամը 11^{00}-ին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մնացականյանին, հեռախոս՝ +374 93 93 22 33:

Պատվիրատու՝ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ